

ԱՆ. ԾԱՏՈՒՐՅԱՆԸ ՊՈՒՇԿԻՆԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Ա. Գ. ԱՐԱՄՅԱՆ

XIX—XX դդ. հայ-ռուսական գրական կապերի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում բանաստեղծ Ալեքսանդր Մատուրյանը (1865—1917):

Վ. Բրյուսովը «Հայաստանի պոեզիա» ժողովածուի ներածական ակնարկում նշում է. «Ականավոր տեղ է գրավում Մատուրյանը հայ գրականության մեջ որպես չափածոյի թարգմանիչ: Ե՛վ Հովհաննիսյանը, և՛ Թումանյանը հայ-րենի-պոեզիային ընծայել են մի քանի սքանչելի թարգմանություն, սակայն նրանց համար այդ պատահական ոգեշնչման արգասիք էր: Ալեքսանդր Մատուրյանն ընդհակառակը՝ գիտակցաբար և սխտեմատիկորեն նվիրվել է թարգմանություններին»¹:

Ռուսաստանի առաջին հայագետներից մեկի՝ Յու. Ա. Վեսելովսկու հետ ունեցած բարեկամությունն ու ստեղծագործական համագործակցությունը շատ կողմերով նպաստեցին պոետ-դեմոկրատի թարգմանչական դործունեությանը: Մատուրյանը դարձավ հայկական միջավայրում ռուս գրականության առաջավոր գաղափարների ամենագործուն ջատագովներից ու տարածողներից մեկը:

1893—1899 թթ. Մատուրյանը Պուշկինից թարգմանեց երեսուն բանաստեղծություն, որոնց մի մասը հրատարակվեց «Մուրճ», «Տարազ» (Թիֆլիս), «Անահիտ» (Փարիզ) ամսագրերում: 1899 թ. Թիֆլիսի հայոց հրատարակչությունը Բաքվում լույս ընծայեց ճաշակով կազմված մի գրքուկ՝ «Քնար Պուշկինի» խորագրով, որտեղ ներկայացված բանաստեղծություններից 25-ը թարգմանել էր Ա. Մատուրյանը, երեքը՝ Հ. Հովհաննիսյանը, իսկ «Քարե հյուր» պոեմը՝ Կ. Կրասինիկյանը:

1905 թ. Մատուրյանին հաջողվում է կենսագործել երկար տարիների երազանքը. նա Մոսկվայում հրատարակում է «Ռուս բանաստեղծներ» խորագրով թարգմանությունների ժողովածուի առաջին հատորը, որ նվիրված էր Պուշկինի և Լերմոնտովի ստեղծագործություններին:

Պուշկինի հզոր տաղանդը վաղուց էր գրավել հայ հասարակության ուշադրությունը: Դեռ 1843 թ. ճեմարանի ուսանող Հ. Համադասպյանը հրատարակում է ռուս գրողներից կատարած արձակ և չափածո թարգմանություններ, ժողովածուի մեջ մտած քսան բանաստեղծություններից ինը Պուշկինին էին: Այդ ժողովածուն ռուս գրականությանը նվիրված ամբողջական հրատարակության առաջին փորձն էր, որանեղ առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացվում էր նաև Ա. Ս. Պուշկինը:

¹ Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Նրևան, 1967, էջ 125:

Պուշկինի ստեղծագործության և, ընդհանրապես, թարգմանական գրականության նկատմամբ նման վերաբերմունքը պայմանավորված էր հասարակության կողմից առաջագրվող պրոբլեմներով՝ այստեղից էլ բխում էր շատ թարգմանիչների ձգտումը հայ ընթերցողին ներկայացնել Պուշկինին: Շեղվելով Պուշկինից, թարգմանիչները ձգտում էին «ինքնուրույն կերպով» ավելի հեռուն գնալ, «օտար» նյութը հարմարեցնել իրենց ազգային գրականությանը²: Հաճախ թարգմանությունը փոխակերպվում էր նմանողության, սակայն բնագրից կատարված «շեղումը» այնքան ուժեղ էր լինում, որ հնարավորություն էր տալիս խոսելու նրա ստեղծագործական բնույթի մասին:

Այսպես, 50-ական թվականների սկզբին Մ. Նալբանդյանը ստեղծում է «Պոեմ» բանաստեղծության նմանողությունը, որտեղ հաստատվում էր բանաստեղծի բարձր կոչումը, նրա քաղաքացիական պարտքը և գովերգվում էր պոետական ոգևորությունը:

1864 թ. Ս. Շահադիդը «Հյուսիսսիսիայ» ամսագրում տպագրում է «Պոետին» նմանողությունը: Շեղվելով Պուշկինից, ռուս բանաստեղծի մտքերը նա դարձնում է իր հայացքների արտահայտման միջոց:

Հետագա տարիներին, պատահական բնույթ կրող թարգմանություն-նմանողություններին փոխարինելու են դալիս Պուշկինի ստեղծագործության նըպատակասլաց ծանոթացումը հայերին: Այդ խնդրում կարևոր դեր է խաղում «Մուրճ» ամսագիրը, որը մշտապես իր էջերը տրամադրում է Պուշկինից, կերմոնտովից և այլ բանաստեղծներից կատարված թարգմանություններին:

Հավհ. Գնունու տխրահույզակ «Ի՞նչ է կտակել իր ազգին Պուշկինը» հոդվածի երևան գալը 1897 թ. ոչ միայն Դ. Պիսարևի գաղափարների ուղացած արձագանքն էր, այլև փորձ էր հայ ընթերցողին ներշնչել այն միտքը, թե անօգուտ էր Պուշկինի ստեղծագործությանը ծանոթանալը: Նա գրում էր. «Պուշկինը... առհասարակ ոչ մի լուրջ նշանակություն չի կարող ունենալ օտարազգու մոտ»³: Ապա դրան հետևում էր նրա «Բարի խորհուրդը» մեր բանաստեղծներին և թարգմանիչներին՝ «այնքան էլ հանձնվել Պուշկինին», գտնելով, որ թարգմանելու համար կան շատ ստեղծագործություններ, «որոնց օգտավետ լինելն օրվա լույսի պես պարզ է, և Պուշկինի վրա ժամեր հորցնելն ավելի քան անարդարություն է»⁴:

Հովհ. Գնունին իր «Բարի խորհուրդը», ըստ երևույթին, հասցեագրում էր նաև Ալեքսանդր Մատուրյանին, որն այդ շրջանում թարգմանում էր Պուշկինին:

Գնունին արժանի հակահարված ստացավ «Մուրճ» ամսագրի խմբագիր Ա. Արասխանյանից, որը գրեց. «Հայ գրականությունը դեռ միայն նոր-նոր սկսում է ծանոթանալ Պուշկինի հետ: Եվ Պուշկինը առնվազը այնքան արժեք ունի, որ նորա հետ ծանոթանալը հայ հասարակության համար միանգամայն անհրաժեշտ է»⁵:

Այդ անհրաժեշտությունը մասնավորապես լավ էր գիտակցում Մատուրյանը, որը ռուսական դասական պոեզիան համարում էր ռուս ժողովրդի հոգևոր

² В. И. Кулешов, Литературные связи России и Западной Европы в 19 в., М., 1965, стр. 115

³ «Նոր փորձ», Մոսկվա, 1897, № 1, էջ 77:

⁴ Նույն տեղում, էջ 93:

⁵ «Մուրճ», 1897, № 10, էջ 1425:

կյանքի գանձարանը, որի հետ ծանոթանալը կնպաստի «մեր ճաշակի նրբացման և մեր սրտի ու հոգվո զարգացման և ազնվացման»⁶:

Պուշկինի բանաստեղծություններից Մատուրյանի կատարած թարգմանությունները, նրա մասին հոգվածները նոր էջ բաց արին հայ պուշկինագիտության մեջ: Պուշկինի ծննդյան հարյուրամյակի տոնակատարության օրերին «Մշակը» տպագրեց Մատուրյանի վեց թղթակցությունները Մոսկվայից, որոնք դուրս էին գալիս սովորական լրագրային հաշվետվության շրջանակներից: Մատուրյանի հոգվածներում տրվում է Պուշկինի՝ «մեծ լուսավորչի», ստեղծագործության փայլուն բնութագիրը: Նա գրում է. «Պուշկինն իր տաղանդի փայլով ամենախոշոր աղամանդն է հանդիսանում ուսու գրականության թագի վրա: Նա իր քնարի այնքան դյուբիշ ու զարմանալի ուժով, որպես մտքի և սրտի պետ, գրավել է գրականության մեջ մայրենի պոեզիայի գահը»⁷:

Մատուրյանի համար Պուշկինը ուսական քնարերգության նահապետն է, որ առաջինն է «այնքան բուռն խանդով երգել իր ազգին ամենանուրբ զգացումներ, հոգու թրթռումներ, սիրո վարդ ու փուշ և, կարելի է ասել, ստեղծել է ուսական քնարերգությունը»⁸:

Թե ինչպիսի սիրով և պատասխանատվությամբ էր վերաբերվում Ա. Մատուրյանը Պուշկինից կատարված թարգմանություններին, վկայում է նրա մի նամակը: Արդեն լինելով ճանաչված թարգմանիչ, «Մոցարտը և Սալյերին» շտապ թարգմանելու Նար-Ռոսի առաջարկին, նա պատասխանում է. «...դա շատ լուրջ գործ է, սիրելիս, և ձեռաց թարգմանելու բան չի, այն էլ զակազով, նս չափազանց շատ եմ սիրում Պուշկինին, որպեսզի կարողանամ այդպիսի մի անպատվություն հասցնել նրան՝ ձեռաց թարգմանելով նրա գեղեցիկ և դորեզ ստեղծագործություններից մեկը: Դու, իբրև գեղարվեստագետ-ստեղծագործող, Միքայել ջան, լավ կհասկանաս իմ միտքն ու զգացմունքը»⁹:

Ակադեմիկոս Ա. Ն. Վեսելովսկին և նրա որդի Յուրի Վեսելովսկին մեծ օգնություն ցույց տվեցին Մատուրյանին թարգմանության համար բանաստեղծություններ ընտրելիս:

Նշենք, որ ընտրությունը կատարվում էր մեծ ճաշակով, հայ ընթերցողին Պուշկինը ներկայացվում էր ոչ միակողմանի, ընտրվում էին պոետի քաղաքացիական, սիրային, փիլիսոփայական քնարերգության նմուշներ: Ըստ որում, չբավարարվելով գոյություն ունեցող թարգմանություններով, Մատուրյանը նորից թարգմանեց 14 բանաստեղծություն և առաջին անգամ հայ հասարակությանը ներկայացվեցին հետևյալ գործերը՝ «Հրեշտակ», «Անշար», «Փոթորիկ», «Վերածնունդ», «Դու հեռավոր հայրենիքիդ կարոտած...», «Գյուղ», «Օ՛, մի տխրի...», «Բաղձանք», «Փառքի տենչը», «Չառադաևին», «Երկու ասպետ», «Հավերժահարս», «Կոշկակար», «Թալիսման», «Մադիկ», «Քան անդրանիկ ծաղիկները դաշտերի...», «Ես կարծում էի, սիրտս մոռացավ...»:

Պուշկինի քնարերգության պատկերների հարստությունը, կատարելության չափ պարզ լեզուն, արտասովոր հարուստ հնչյունային ներկայակեր երբեմն թարգմանչի համար ստեղծում էին անհաղթահարելի դժվարություններ: Մատուրյանի ոչ բոլոր թարգմանություններն են հավասարաբեռ: Որոշ թարգ-

⁶ «Գրական ժողովություն», գիրք առաջին, Երևան, 1961, էջ 52:

⁷ «Մշակ», 1899, № 88:

⁸ «Մշակ», 1899, № 73:

⁹ «Գրական ժողովություն», էջ 84:

մանություններ, օրինակ՝ «Գյուղը», կարելի է գնահատել որպես նմանողություն, որտեղ հավատարիմ մնալով բնագրին, նրա պատկերալին համակարգին, Մաաուրյան-թարգմանիչը տեղ-տեղ ընկնում է բանաստեղծ-Մատուրյանի ազդեցության տակ, որի հետևանքով կորչում է «մերկ պարզության հրապույրը», որ այնքան գնահատում էր Պուշկինը։ Սակայն Մատուրյանը ընթերցողին հասցրեց պուշկինյան քաղաքացիականության պաթոսը, նրա խիզախ ազատասիրական ոգին։

Увижу ль, о друзья! народ неугнетенный
И рабство, падшее по манию царя,
И над отечеством свободы просвещенной
Взойдет ли наконец прекрасная заря?

Մատուրյանի Թարգմանությունը.

Ընկերներ, արդյո՞ք կտեսնեմ աչքով
ես մի օր իմ ազդն ազատ, անհալած,
եվ արքայական քաջահաղթ բազկով
Անարգ ստրկությունն իսպառ տապալված:
Եվ քեզ, հայրենիք, վերջապես, մի օր
Կը շողա՞ արդյոք պայծառ, լուսավոր
Այնքան փափագած, այնքան տենչահույզ
Սուրբ Ազատության սիրուն արշալույս...

Պուշկինի չորս տողը Մատուրյանի Թարգմանությունը կրկնապատկելի է (ամբողջ բանաստեղծությունը 61 տող է, Մատուրյանի մոտ՝ 98): Սակայն անկախ դրանից, ղգացվում է Թարգմանչի ակտիվությունը. այսպես, օրինակ. «народ неугнетенный» Թարգմանության մեջ դարձել է «իմ ազգն ազատ, անհյարձ» «и рабство, падшее по манию царя» Թարգմանված է.

Եւ ինչպէս ինքն իր քաջահաղթ բազկով
Անարգ ստրկութիւնն իսպառ տապալկած»:

Վերջին երկու տողերին, որոնք վկայում են լուսավորչալ միապետի նկատմամբ Պոլշիկնի ունեցած պատանեկան հավատը, Մատուրյանը տվել է միանգամայն այլ՝ հուսի և պայքարի նորերանգ:

Իր ժողովրդի ազատագրության համար մարտնչող ազատ ու հպարտ անհատի մոտիվը միշտ էլ հուզել է Մատուռյանին և դրա համար էլ Պուշկինի «Ջաղաղակին» բանաստեղծության գաղափարները մոտ ու հարազատ էին հայ պոետին: Թարգմանիչը բանաստեղծության վերնագիրը փոխում է թարգմանության առաջին տողերով՝ «Շուտ անցան...» (հհարկե, Ջաղաղակի անունը հայտնի էր հայ առաջավոր մտավորականությանը, բայց ոչ ընթերցող լայն զանգվածներին): Ռուսաստանի փոխարեն նա օգտագործում է «հայրենիք», ուժեղացնում հաստատակամության, վստահության մոտիվը:

Товарищ, верь: взойдет она
Звезда пленительного счастья.
Հովատա — կը գա, կը գա անկասկած
Շողովա՛ն ալբր բախտաբե՛ր գարնա՛ն:

«Կալանավորի» մեջ արծիվը կոչ է անում՝ «Թող այդ բանտըդ անիծյալ»։ Պուշկինի «Давай улетим» արտահայտության փոխարեն, որն անկասկած ուժեղացնում է թարգմանության հուզական կողմը։

Մատուրյանին հաջողվում է մերարտադրել «Անշարի» ողբերգականությունը, արտահայտելով տիրակալի շահերի համար կործանման դատապարտված մարդու նկատմամբ պուշկինյան ջերմ և բացահայտ կարեկցանքը։

Պահպանելով բնագրի ուրիշը (աննշան շեղումներով խաչաձև հանգավորում), թարգմանիչը ստեղծում է վառ, հումանիստական մի ստեղծագործություն։

Հոլակապ է հնչում առաջին տունը՝ նախապատրաստելով դրամատիկական իրադարձություններին։

Զոր, ամայի անապատում,
Հավերժ կիզող արևի տակ
Անշարն, ասես ահեղ պահնորդ,
Կանգնած է լուռ ու մեն-մենակ։

Իշխանության բռնադատության, հափշտողականության բնույթի մասին միտքը («гибель разослал к соседям в чуждые пределы») թարգմանության մեջ հնչում է ավելի հաստատուն։

Սվ այդ զենքով մահ սփռելով,
Շատ աշխարհներ առավ, տիրեց...

Մատուրյանի ստեղծագործական հաղթանակը հանգիսացավ Պուշկինի ամենասրտառուչ ու խորաթափանց գործերից մեկի՝ «Թե շրջում եմ աղմկալից փողոցում...» բանաստեղծության թարգմանությունը։

Տոգորված լինելով համամարդկային փրկսոփայական ընդհանրացմամբ, այն իր մեջ կրում է պոետի պատմական լավատեսության վիթխարի լիցքը, նրա անհատնում կենսասիրությունը։ Այդ բանաստեղծությունը, որը բազմիցս գրավել է թարգմանիչների ուշադրությունը (Ս. Թանդյանց, Կ. Կրասիլնիկյան, Հ. Հովհաննիսյան և ուրիշներ), Մատուրյանի շնորհիվ իր արժանի տեղն ունի հայ գրականության մեջ։

Հետևելով Պուշկինին, Մատուրյանը պահպանել է էլեգիային հատուկ ուրիշ-շարահյուսական կառուցվածքը։

Брожу ли я вдоль улиц шумных,
Вхожу ль во многолюдный храм,
Сижу ль меж юношей безумных,
Я предаюсь моим мечтам.

Թե շրջում եմ աղմկալից փողոցում,
Թե մտնում եմ ես մարդաշատ սուրբ տաճար,
Թե նստած եմ ջահիլների շրջանում,—
Միշտ նույն մտքերն ինձ հուզում են անդադար։

Մատուրյանի թարգմանությունն ազատ չէ որոշ վրիպումներից, բայց ներան հաջողվել է արտահայտել Պուշկինի մտքի խորությունն ու հստակությունը, մարգու անցողիկության, բնության ու կյանքի հավերժության մասին նրա խորհրդածությունների պայծառ թախիծը:

Պուշկինի «Մարգարեն» հիրավի մտել է հայ քաղաքացիական քնարերգության մեջ, Պուշկինը շարունակում էր դեկաբրիստների քնարերգության ավանդները, որտեղ բանաստեղծի կերպարը մերձենում է աստվածաշնչյան մարգարեի կերպարին: Նրա կրքոտ՝ «Խոսքով այրիր մարդկային սրտեր» կոչը հարազատ ու մոտ էր պոետ-դեմոկրատ Մատուրյանին: Պոետի՝ «Ժշմարտության առաքյալի» թեման, որը անձնվիրաբար տրվել է մարդկանց, մարտնչում է բարու, արդարության ու գեղեցկության գաղափարների հաղթանակի համար, անցնում է 90-ական թվականների նրա ամբողջ ստեղծագործության միջով (սևաքայալ, սևմբոխին, «Հայ երդչին», «Պոետին» և այլն):

Մատուրյանը կոչ է անում պոետին.

Մարտնչիր անվախ, որպես քաջ զինվոր,
Անկաշառ խոսքի դրոշակը ձեռքում...

Յուրակ խանդադրյալն բացասաբար է արտահայտվել «Մարգարեի» ծատուրյանական թարգմանության մասին, այն անվանելով բնագրի «դժգույն պատճեն»: Թվում է, հմուտ գրականագետը որոշ չափով ձևականորեն է մոտեցել թարգմանչի աշխատանքի գնահատմանը: Հիրավի, Մատուրյանը կրճատել է «և» շաղկապների քանակը, սակայն դրանք, կարելի է ասել, ամենեին չեն վնասել թարգմանությանը, պահպանվել է «աստվածաշնչի ոգին»: Իսկ ինչ վերաբերում է բոլոր սլավյանիզմները դրաբար թարգմանելու խնդրին (Մատուրյանը թարգմանել է դրանցից միայն երկուսը՝ «ВИЖДЬ» և «ВНЕМЛИ»), ապա, թվում է, թարգմանչիը այստեղ էլ չի դավաճանել Պուշկինին, բանաստեղծության արտահայտչականության և ազդեցիկության հասնելով նոր հայերենի միջոցներով՝ որոշ գրաբարյան ձևերի հարակից օգտագործմամբ:

Восстань, пророк, и виждь и внемли,
Исполнись волею моею,
И, обходя моря и земли,
Глаголом жги сердца людей.

Ել, ով մարգարե, և լուր, և հայիր,
Եվ հրգոր կամքիս հըլու, անձնվեր,
Շրըջիր դու ծովեր, շրըջիր դու երկիր,
Եվ խոսքով այրիր մարդկային սրտեր:

Մատուրյանի այս թարգմանությունը իր արժեքը պահպանում է նաև մեր օրերում:

Թարգմանչին չի հաջողվել տալ Պուշկինի «Պոետ» ստեղծագործության պատկերների ընդհանրացնող ուժը, սիմվոլայնությունը: Բայց այստեղ նշենք մի փաստի մասին: Բանաստեղծության առաջին տողերը՝

Пока не требует поэта
К священной жертве Аполлон,

Մատուրյանը թարգմանել է.

Քանի Ապոլոն չէ կոչել երգչին
Դեպի սրբազան ոգևորություն...

Սա պատկերային անալոգիայի (образная аналогия) մի հետաքրքիր օրինակ է, երբ թարգմանիչը իր սեփական բանաստեղծության որոշ տարրեր դնում է թարգմանության մեջ: Մատուրյանի վաղ շրջանի բանաստեղծություններից մեկը՝ «Իմ ուխտը», այսպես է սկսվում.

Քանի դեռ սրտումս վառվում է կրակ
Անկեղծ, սրբազան ոգևորություն...

Ի դեպ, կարելի է նշել, որ Մատուրյանը օգտագործում է նաև հակառակ եղանակը՝ «Դրիմի ալբոմից» շարքի բանաստեղծություններից մեկում (սՄովի վերա)՝ նա վերարտադրում է Պուշկինի «СВОБОДНАЯ СТИХИЯ» արտահայտությունը՝ «Ողջունյն քեզ, ով ծով, դու ազատ տարերք»:

Պուշկինի սիրային քնարերգության ոչ բոլոր թարգմանություններն են հավասարաթեք: Այստեղ արտահայտվել է թարգմանչի ազատությունը, Մատուրյանի բառապաշարի, նրա պատկերային համակարգի տարրերի առավել ներթափանցումը թարգմանության կառուցվածքի մեջ:

Ամբողջության մեջ հաջող է վերարտադրված «Մաղիկ», «Քան անդրանիկ ծաղիկներ դաշտերի» բանաստեղծությունների թախծոտ տրամադրությունը, «Թալիսմանի» ուրիշությունը, երգայնությունը: Բնադրից կատարված աննշան շեղումները չեն արժեքազրկում այնպիսի թարգմանություններ, ինչպիսիք են՝ «Հրեշտակ», «Բաղձանք», «Բլբուլ» և այլն:

Մատուրյանի թարգմանությունները մեծ դեր խաղացին հայ-ռուսական գրական կապերի զարգացման ու ամրապնդման գործում, հայ ընթերցողի առաջ բացելով Ա. Ս. Պուշկինի ստեղծագործության ևս մի էջ:

ԱԼ. ЦАТУРЯН—ПЕРЕВОДЧИК ПУШКИНА

А. Г. АРАМЯН

Р е з ю м е

В 1893—1899 гг. Ал. Цатурян перевел тридцать стихотворений Пушкина—армянскому читателю были представлены образцы политической, философской и любовной лирики великого русского поэта. Эти переводы вошли и в составленный Цатуряном в 1905 г. I том «Русских поэтов».

Для Цатуряна, в отличие от многих его предшественников, характерно бережное отношение к поэтическому оригиналу, стремление передать его глубину, образную систему и ритмико-интонационный строй.

Лучшие переводы Цатуряна не утратили своей ценности и в наши дни.